https://doi.org/10.46991/hc.2022.17.1.164

Էլինա Միրզոյան
բ.գ.թ., ՀՅԹԻ Հուշագրությունների,
վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող

«ԱԼԲԱՅՐԱՔ» ԹԵՐԹԸ՝ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՉԵՆ ԼԻՆԵԼՈՒ» ԺԽՏՈՂԱԿԱՆ ԹԵԶԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՂ (1919-1920 ԹԹ.)

Հիմնաբառեր. «Ալբայրաք» թերթ, իթթիհաթականները, Էրզրում, իթթիհաթականություն, երիտթուրքական մամուլ, «Միություն և առաջադիմություն» կոմիտե, Ռայըֆ Բեյ:

«Ալբայրաք» թերթը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պաշտոնաթերթն էր Էրզրումում, որը կոմիտեի թյուրքականության քարոզչական խողովակներից էր հրատարակման առաջին շրջափուլում: Այն տպագրվել է 1913 թ., ապա ընդհատումից հետո վերահրատարակվել է 1919 թ., և իր հրատարակչական գործունեության ամենաազդեցիկ շրջանը 1919-1920 թթ. էր, երբ թերթը դառնում է իթթիհաթական քաղաքականության քարոզչական գործիք՝ ուղղված ընդդեմ հայերի և Հայկական հարցի:

Թերթը վերահրատարակվում է որպես ի պատասխան Մուդրոսի զինադադարի՝ սկիզբ դնելով «Արևելյան նահանգները Հայաստան չեն դառնալու» լայնածավալ թեզին, որը հետագայում փոխվում է որպես Ալեքսանդրապոլի պայմանագրի արձագանք՝ դառնալով «Արևելյան նահանգները թուրքի հայրենիքն են»: Թերթն ատելություն էր սերմանում հայերի նկատմամբ, որով իբրև թե աշխարհին ի ցույց էր դնում այն «փաստը», որ Արևելքում սպանվում են ոչ թե հայերը, այլ թուրքերը՝ հայերի կողմից: Առանցքային ընդգծված դիրքորոշում էր բոլոր այն պետությունների քննադատումը, որոնք այս կամ այն կերպ սատար էին կանգնում հայկական կողմին:

Elina Mirzoyan
PhD in Philology, a researcher at the Department
of the Armenian Genocide Memoirs,
Documents and Press, Armenian Genocide
Museum-Institute Foundatio

THE NEWSPAPER “ALBAYRAK” - THE FOUNDER OF THE DENIAL THESIS: “EASTERN PROVINCES WILL NOT BECOME ARMENIA” (1919-1920)

Keywords: "Albayrak" newspaper, Ittihadists, Ittihadizm, Young Turk Press, the Committee of Union and Progress, *Raif Bey*.

«Ալբայրաք» թերթը՝ «արեվելյան նահանգները Հայաստան չեն լինելու»
ժխտողական թեզի սկզբնավորող (1919-1920 թթ.)
The Newspaper "Albayrak" - the Founder of the Denial Thesis:
"Eastern Provinces Will Not Become Armenia" (1919-1920)

The newspaper "Albayrak" was the official publication of the "Union and Progress" committee (CUP) in Erzrum, and in the first period served to promote Turkism. It was published in 1913, after an interruption it was republished in 1919. The most influential period was 1919-1920, when it was a propaganda tool of the Ittihat policy against the Armenians and the Armenian Question. The newspaper was republished in response to the Mudros Armistice, laying the foundation for a large-scale thesis - "Eastern provinces will not become Armenia", which subsequently changes as a response to the Treaty of Alexandropol: "Eastern states are the homeland of the Turks." The newspaper sowed hatred towards the Armenians, allegedly showing the world the rebuttal fact that in the East it is not the Turks who kill the Armenians, but the Armenians who kill the Turks. Criticism of those countries that supported the Armenian Question was the unshakable position of the newspaper.

Элина Мирзоян
канд. фил. наук, научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда "Музейинститут Геноцида армян,"

ГАЗЕТА «АЛБАЙРАК»- ОСНОВАТЕЛЬ ОТРИЦАЮЩЕГО ТЕЗИСА: «ВОСТОЧНЫЕ ГУБЕРНИИ НЕ СТАНУТ АРМЕНИЕЙ» (1919-1920 ГГ.)

Ключевые слова: газета «Албайрак», иттихадисты, *Эрзурум*, иттихадизм, младотурецкая пресса, комитет «*Единение и прогресс*», *Раиф Бей.*

Газета «Албайрак» являлась официальным изданием комитета «Единение и прогресс» в Эрзуруме, и в первый период своего существования служила пропаганде тюркизма. Она издавалась в 1913 г., после перерыва газета была переиздана в 1919 г. Самым влиятельным периодом были 1919-1920 гг., когда «Албайрак» становится пропагандистским инструментом иттихатской политики против армян и Армянского вопроса. Газета переиздается в ответ на Мудросское перемирие, дав старт широкомасштабному тезису - «Восточные губернии не станут Армением», что в последствии становится откликом Александропольского договора: «Восточные губернии - родина турок». Газета сеяла ненависть по отношению к армянам, якобы показывая миру тот вымышленный факт, что на Востоке не турки убивают армян, а армяне убивают турок. Критика тех стран, которые поддержали Армянский вопрос, была незыблемой позицией газеты.

* * *

Մուտք: «Ալբայրաք» թերթի ընդհանուր պատմության համառոտ ակնարկ: «Ալբայրաք» թերթն ունի հրատարակչական պատմության երկու շրջափուլ: Առաջին տպագրական շրջափուլն սկսվել է 1913 թ. մարտի 14-ին Էրզրումում որպես «Միություն և առաջադիմության» մասնաճյուղի պաշտոնաթերթ: Այն լույս է տեսել 93 օրինակով 1913 թ.

մարտի 14-ից մինչև 1915 թ. ապրիլի 11-ը: Քանի որ այդ օրինակներից միայն երկուսն են թրքական արխիվներում պահպանվել, հետևապես այդ շրջափուլի մասին ծավալուն ուսումնասիրություններ գրեթե չկան թրքական գիտատեղեկատվական աղբյուրներում, ինչը փաստում են նաև թուրք հետազոտողները (Uca, 2010, 259-282; Temiztürk, Seyhan, 2014, 2349): Եվ, ընդհանրապես, նշենք, որ առհասարակ այս թերթի և դրա առաջ քաշած թեզի շուրջ ուսումնասիրություններ բացակայում են նաև հայկական մասնագիտական աղբյուրներում:

Թերթի հիմնադիրը Սելիմ Փոլաթ[1] անունով մի երիտասարդ էր: Թերթն իթթիհաթական կարևորագույն պարբերաթերթերից էր: Հրատարակման սկզբնական տարիներին «Ալբայրաքի» հիմնական ուղեգիծը թյուրքականությունն (Çoşar, 1964, 199) էր, ինչը, սակայն, հետագայում՝ գլխավորապես երկրորդ շրջափուլում, փոխվել է, ինչի մասին ստորև կխոսենք:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին որոշ ժամանակով փակված թերթը վերատպվում է 1919 թ. մարտի 5-ից 1921 թ. փետրվարի 14-ը. «Ռուսների կողմից Էրզրումի բռնազավթումից հետո թերթը որոշ ժամանակ դադարեցնում է իր հրատարակչական կյանքը: Ապա վերահրատարակվում է Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին տարածաշրջանից ռուսների դուրս գալուց հետո» (Albayrak Gazetesi, 03.03.2022; Temiztürk, Seyhan, 2014, 2349-2365): Թերթի խմբագրակազմում ընդգրկված էին Սուլեյման Նեջաթին (Գյուների)[2] և իր եղբայր Միթհաթը (Թուրանը), Ջևաթ (Դուրսունօղլու)[3] և Մուշտակ Սըթքը (Դուրսունօղլու)[4] եղբայրները (Uca, 2010, 259), գրաշարող Իզմիրցի Արիֆը և Համզա Դեմիրելը (Uca, 2010, 259): Սուլեյման Նեջաթի Բեյն այն առաջին անգամ տպագրել է Էրզրումի «Թաշմաղազալարի» դիմաց գտնվող «Թրքական տպարան» կոչվող վայրում, իսկ հետո՝ «Ալբայրաք տպարանում», և թերթը թրքական լրագրության պատմության կարևորագույն ձեռքբերումներից մեկն է (Akbulut, Aslan, Aslan, Başak…, 2009, 9-10; Uca, 2010, 259-282):

«Ալբայրաքը» լույս էր տեսնում շաբաթը երկու անգամ՝ երբեմն երկուշաբթի և ուրբաթ (Temiztürk, Seyhan, 2014, 2349; Akbulut, Aslan, Aslan, Başak…, 2009, 259-282), երբեմն էլ՝ կիրակի ու հինգշաբթի օրերին (Özçelik, 2005, 14) :

Երկրորդ շրջանի ընդհանուր օրինակները 131-ն են, որից մենք օգտվել ենք շուրջ 110 համարից (Akbulut, 2012, 10) :

Թերթն ի սկզբանե տպագրվել է որպես քաղաքական ուղղվածությամբ պաշտոնաթերթ, որն առաջ էր քաշում նաև կրթական խնդիրների, հասարակական անցուդարձի, առևտրային հարաբերությունների, առողջապահական խնդիրների,

---

[1] Որևէ այլ տեղեկություն Սելիմ Փոլաթի մասին չկա:

[2] Լրագրող և հասարակական գործիչ, Կոնիայի «Միություն և առաջադիմության» միջնակարգ դպրոցում թուրքերենի ուսուցիչ, Էրզրումի «Միություն և առաջադիմության» դպրոցի (Ալբայրաք նախակրթարանը նաև այսպես է հիշատակվում) տնօրեն, ինչպես նաև օսմանյան պատգամավոր: Նա Կոնիայի իրավաբանական դպրոցի շրջանավարտ էր: Այս մասին առավել մանրամասն տե՛ս (Necati Güneri, 1999):

[3] Մանկավարժ, քաղաքական գործիչ և գրող: Ջևաթ Բեյը, որն Էրզրումում թրքական ազգային-ազատագրական պայքարի ձայնը դարձած «Ալբայրաք» թերթի հրատարակչական կազմկոմիտեից էր, թերթերի սյունակներում սկսեց հոդվածներ գրել՝ ընդդեմ այն տերությունների, որոնք փորձում էին որևէ կերպ սատար լինել հայկական կողմին: Նա նաև Էրզրումի մասնավոր նախակրթարանի աշխատակից էր: Միևնույն ժամանակ ստանձնել էր Müdâfaa-i Hukuk Cemiyeti-ի գործավարի պարտականությունը (Cevat Dursunoğlu (1892-1970), https://ataturkansiklopedisi.gov.tr/bilgi/cevat-dursunoglu-1892-1970 (03.03.2022); Tolga, 2010):

[4] Մեծ դերակատար է եղել թրքական Ազգային պայքարի պատմության մեջ, իսկ հետո՝ Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ: Էրզրումի քայլերգի հեղինակ, օսմանյան պատգամավոր, ազգային-հասարակական գործիչ, գրող (*Durak*, 2011, 29, 2-154):

տեղական ինքնակառավարման խնդիրների շուրջ որոշ դիտարկումներ (Albayrak, 21 Eylül 335/1919, S.29, s.2.; նույնի՝ 17 Mayıs 336/ 1920, S.92, s.1.; 25 Eylül 335/ 1919, S.30, s.2.; 15 Şubat 336/ 1920, S.68, s.2.; 22 Teşrîn-i sânî 336/ 22 Kasım 1920, S.119, s.2.; 28 Kânûn-ı evvel 335/ 28 Aralık 1919, S.56, s.2.; 30 Ağustos 336/ 1920, S.107, s.2.; 14 Haziran 336/ 1920, S.96, s.2.; 23 Ağustos 336/ 1920, S.106, s.2.; 22 Teşrîn-i sânî 336/ 22 Kasım 1920, S.119, s.2.; 29 Teşrîn-i sânî 336/ 29 Kasım 1920, S.120, s.2.; 16 Teşrîn-i evvel 335/ 16 Ekim 1919, S.36, s.2.):

Ինչպես այդ շրջանում տպագրվող յուրաքանչյուր թերթում, այնպես էլ «Ալբայրաքում» ևս որոշ գովազդներ են հրապարակվել վերջին էջում՝ նորությունների և այլատեսակ հոդվածների շարքում: Թեև այդ գովազդները բնութագրվում են որպես հատուկ նպատակով ամենօրյա տեղեկատվական նյութեր, որոնք, թվում է, թե մեծ ուշադրություն չեն գրավում, սակայն դրանք իրականում այդ թերթերի պարագայում ժամանակ առ ժամանակ կարող էին պատմական տեղեկատվություն տալ արդեն գալիք-նախաձեռնած իրադարձությունների մասին, որոնք առավել ռազմաքաղաքական բնույթ էին կրում: Նշենք, սակայն, որ պակաս չէին նաև հասարակական ոլորտին վերաբերող նյութերը (Uca, 2010, 259-282), որոնք լայն ուսումնասիրության անհրաժեշտություն ունեն, քանի որ այդ գովազդներից գրեթե յուրաքանչյուրը կարևոր հուշումներ ու պատկերացումներ է տալիս այդ շրջանի հասարակական կյանքի վերաբերյալ (Uca, 2010, 259-282):

Իր հրատարակչական գործունեությունը վերսկսած «Ալբայրաք» թերթը սկզբնական շրջանում սահմանափակ հնարավորություններով փորձեց հանրությանը հայտնել Թուրքիայի և տարածաշրջանի նորությունները: Այն իր ընթերցողներին էր սպասարկում տեղեկատվություն՝ տարբեր քաղաքական թեմաների մեկնաբանություններով, որից աստիճանաբար անցում է կատարում՝ աջակցելու թրքական Millî Mücadele (Ազգային պայքար) և Kuvayı Milliye («Քուվայի Միլլիյե») շարժմանը (Özçelik, 2021, 21-37): Բացի դրանից՝ ներառվել են ծավալուն վերլուծական նորություններ, հրատարակվել են երկարաշունչ նյութերով սյունակներ և մեկնաբանություններ՝ ազատագրական պայքարին աջակցելու միտումով (Özçelik, 2021, 21-37): Այս ուղղությամբ հիմնականում տպագրվում էին նյութեր՝ միտված թրքական ոգին բարձրացնելուն, ատելություն սերմանելուն և թրքական ցեղասպան գործողությունները հայերին վերագրելուն: *Ազգային պայքարի* տարիներին հասարակական կարծիք կարող էր ձևավորվել հանրահավաքներ կազմակերպելու, թռուցիկներ բաժանելու միջոցով հայտարարություններ անելով, մզկիթներում հանրությանը դիմելով և կենտրոնացնելով, թերթեր ու ամսագրեր հրատարակելով: Այդ ընթացքում քարոզչական ամենաարդյունավետ տարբերակը դարձան թերթերը, այս պարագայում քննվող թերթը նույնիսկ դառնում է քաղաքական շարժում առաջնորդող «թրքական խոսք». «Էրզրումն առաջիններից էր, որը ձայն բարձրացրեց: Դադաշներից (Dadaş Ne Demek, Kime Denir? TDK'ya Göre Dadaş Kelimesinin Anlamı Nedir?, 02.02.2022)[1] նշանավորները հավաքվեցին և գոռացին ի լուր աշխարհին՝ «Արևելյան նահանգները Հայաստան չեն լինելու»:

[1] «Դադաշ» բառը կիրառվում էր ընդհանուր առմամբ Էրզրումում. այն բազմիմաստ բառ է: Էրզրումի շրջանում գործածվում է «եղբայր», «քաջարի երիտասարդ», «քաջ, ավագ ընկեր» և առհասարակ «ընկեր» իմաստներով:

1919 թ. մայիսի 15-ին Իզմիրի տիկինները, որոնք իրենց սրտերում զգացին Էրզրումի օկուպացիայի/բռնազավթման ցավը, հավաքվեցին ու կազմակերպեցին մեծ հանրահավաք՝ բողոքելով օկուպացիայի դեմ և միջադեպը հեռագրելով ԱՄՆ նախագահ Վիլսոնին (*İlk sesi haykıran yüce Erzurum*, 02.02.2022) :

Մի խումբ հերոսներ, որոնք սկսեցին լուծում որոնել երկիրն այդ ծանր վիճակից փրկելու համար, սկզբում կազմակերպվեցին՝ Վիլայաթ-ի Շարքիյե Մուդաֆաա-ի Հուկուկ Ջեմիեթիի[1] Էրզրումի մասնաճյուղը բացելով, և նրանք իրենց վճռականությունը ցուցաբերեցին Կոնգրեսի միջոցով հունիսի 17-ին «Էրզրումի նահանգային կոնգրեսի» անվան ներքո 1919 թ.» (*İlk sesi haykıran yüce Erzurum*, 02.02.2022):

Էրզրումի համագումարման օրերին ընթացող իրադարձություններին ուշադրությամբ հետևած «Ալբայրաք» թերթը լայնորեն անդրադարձել է համագումարի մասին լուրերին: Համագումարի ավարտին «Ալբայրաք» թերթը հրապարակել է «Կոնգրեսի հռչակագրի» տեքստը՝ «Արևելյան նահանգները Հայաստան չեն լինելու» խորագրի ներքո՝ (Uca, 2010, 259-282; Temiztürk, Salih Seyhan, 2014, 2349-2365) թերթի 34-րդ համարից սկսած (Temiztürk, Seyhan, 2014, 2349-2365):

«Ալբայրաք» թերթն սկսում է իրազեկել ու համախմբել Էրզրումի ու նրա շրջակայքի ժողովրդին նույն նպատակների շուրջ՝ հասարակության ձայնը թրքական հասարակական լայն կարծիք դարձնելու և դրան հաղորդակից դարձնելու նաև համաշխարհային հասարակությանը (Özçelik, 2005, 10-14) : Եվ Սուլեյման Նեջաթին, որն այդ շրջանում «Ալբայրաք» թերթի պատասխանատու խմբագիրն ու գրեթե բոլոր աշխատանքները համակարգողն էր, աստիճանաբար որդեգրում ու բացահայտում և պարտադրում է իր քաղաքական ուղղվածությունն ու նպատակային ուղեգիծը որպես կլիշե (այս դեպքում թերթի յուրաքանչյուր համարում ամրագրված խորագրային ձևաչափ)՝ որդեգրելով «Արևելյան նահանգները Հայաստան չեն լինելու» ժխտողական կարգախոսը. «Այս շրջափուլում թերթի առաջնային քաղաքականությունը Արևելյան նահանգների բնակիչներին զգուշացնելն ու լուսավորելն էր և տարածաշրջանում թուրք բնակչության մեծամասնություն կազմելու մասին հայտնելն էր» (*Şirin*, 2009, 207-220): Ըստ էության,

---

«Դադաշ» բառն Էրզրումի մշակույթին և էրզրումցի լինելուն անդրադառնալու խորհրդանշական ձև է դարձել թուրքերի մոտ. այդ պատճառով էրզրումում և նրա շրջակայքում ապրող մարդիկ սովորաբար միմյանց անվանում են դադաշ (Dadaş Ne Demek, Kime Denir? TDK'ya Göre Dadaş Kelimesinin Anlamı Nedir?, https://www.milliyet.com.tr/gundem/dadas-ne-demek-kime-denir-tdkya-gore-dadas-kelimesinin-anlami-nedir-6196754, 02.02.2022):

[11] Արևելյան նահանգների ազգային իրավունքի պաշտպանության կոմիտե (օսմ.՝ Vilâyât-ı Şarkiyye Müdâfaa-i Hukûk-ı Milliye Cemiyeti, ժմկ թուրք.՝ Doğu İllerinin Millî Hukukunu Koruma Cemiyeti): Կոմիտեի նպատակն էր թույլ չտալ, որ «Անատոլիայի արևելյան նահանգները հանձնվեն հայերին և անջատվեն Օսմանյան կայսրությունից»: 1918 թ. դեկտեմբերի 2-ին (թրքական որոշ աղբյուրներում փետրվարի 4-ն է հիշատակվում) ծագումով Դիարբեքիրից/Տիգրանակերտ Սուլեյման Նազիֆի ջանքերով (Şen, Ankara, 537) Կոստանդնուպոլսում/Ստամբուլում ստեղծվեց Vilayat-ı Şarkiye Müdafaa'î Hukuk-i Milliye Cemiyeti-ն, և կոմիտեն ընդունեց հետևյալ որոշումները..

«Արևելյան նահանգները պատմականորեն եղել են մահմեդական, այսինքն՝ թրքական երկիր: Այս տարածաշրջանում հայերը միշտ եղել են փոքրամասնություն:

Նրանք հիսուն տարի ստիպել են մուսուլմաններին պաշտպանվել այս տարածաշրջանում տարբեր քաղաքական սպանություններով և կոմիտեների միջոցով: «Փորձը և հաջողությունը» նրանցից է ստացվել» (Dursunoğlu, 1946, 19):

Ջևաթ Բեյի ջանքերով 1919 թ. մարտի 10-ին Էրզրումում պաշտոնապես բացվեց նշյալ կոմիտեի մասնաճյուղը. «Ընկերակցությունն արձագանքեց հայերին՝ արևելյան նահանգների վերաբերյալ վերջիններիս պահանջին, հայտարարեց, որ ոչ թե հայերը, այլ թուրքերն են հալածվում Արևելքում»:

Կոմիտեի նախագահն էր Հոջա Ռայըֆ էֆենդին, իսկ Տնօրենների խորհուրդը ներկայացնում և աջակցում էին ուլեմաները, զինվորները, մտավորականները, պետական ծառայողները և քաղաքի նշանավոր մարդիկ (նախագահ՝ Ռայըֆ էֆենդի, գործավար՝ Ջևաթ Բեյ): «Ալբայրաք» թերթն էլ, ինչպես նշել ենք, կոմիտեի հրատարակչական մարմինն էր՝ պաշտոնաթերթը (Vilâyât-ı Şarkiyye Müdâfaa-i Hukûk-ı Milliye Cemiyeti/https://ataturkansiklopedisi.gov.tr/bilgi/vilayat-i-sarkiyye-mudafaa-i-hukuk-i-milliye-cemiyeti/?pdf=3922, 02.02.2022):

«Ալբայրաք» թերթը՝ «արեվելյան նահանգները Հայաստան չեն լինելու» ժխտողական թեզի սկզբնավորող (1919-1920 թթ.)

The Newspaper "Albayrak" - the Founder of the Denial Thesis: "Eastern Provinces Will Not Become Armenia" (1919-1920)

«Ալբայրաք» թերթն սկսել է տպագրվել՝ «իրենք իրենց պաշտպանելու» և «Մուդրոսի զինադադարով հաստատված տարածաշրջանի այն իրավունքներից, որով նաև նախատեսվում էր ստեղծել Մեծ Հայաստան՝ թերթի յուրաքանչյուր համարում որպես խորագիր ներկայացնելով «Արևելյան նահանգները Հայաստան չեն լինելու[1]» թեզը» (*Şirin*, 2009, 207-220). ցանկացած նյութ տպագրվում էր այս խորագրի ներքո: Թերթը նաև Vilâyât-ı Şarkiyye Müdâfaa-i Hukûk-ı Milliye Cemiyeti-ի Էրզրումում մասնաճյուղի հրատարակչական պաշտոնաթերթն էր (Akbulut, 1991; Necati, 1999), ինչի մասին արդեն նշվել է: Այն, ինչպես թրքական կողմն է ներկայացնում, հատկապես Սուլեյման Նեջաթին է դարձնում Էրզրումի Ազգային իրավունքների պաշտպանության միության ոգին և Արևելյան նահանգների Ազգային իրավունքների պաշտպանության միության պաշտոնաթերթը: Թերթը, այս կարգախոսը որդեգրելով, թրքական հասարակական ազգային ոգին բարձրացնելու նպատակ է հետապնդում, որը վերածվում է քաղաքացիական-հասարակական, ինչպես նաև ռազմաքաղաքական լայնածավալ շարժման:

Այսպիսով՝ «Ալբայրաքը» դարձավ Արևելյան շրջանի ամենաարդյունավետ քաղաքական քարոզչական գործիքը՝ բոլոր տարբերակներով առաջ մղելով «Արևելյան նահանգները Հայաստան չեն լինելու» ժխտողական թեզը[2] և հայատյացության քարոզչական ուղեգիծը: Համագումարների ժամանակաշրջանում թերթն İrade-i Milliye-ի[3] հետ եղել է Արևելքում պատմական ժամանակափուլի կարևորագույն աղբյուրներից մեկը (Ural, 2002, 170). այդ շրջանում թրքական ամենաարդյունավետ ժխտողական քարոզչական խողովակներից մեկն էր, որը մեծապես կենտրոնացած էր Հայկական հարցի վրա՝ որպես Մուդրոսի զինադադարին պատասխան ձայն (Başbakanlık Osmanlı Arşivi (BOA), Dosya No: 2877, Gömlek No: 11; BOA, Dosya No: 2877, Gömlek No: 37; Başbakanlık Cumhuriyet Arşivi (BCA), Dosya No: 277–258)[4]:

Այսպես, «Ալբայրաք» թերթի երկու կարևոր անձինք էին Սուլեյման Նեջաթին (Գյուների) և Ջևաթ (Դուրսունօղլու) Բեյերը, որոնք Էրզրումի իրավապաշտպան ընկերության խորհրդի կազմում էին (Akbulut, 2006, 16-20): Սակայն շատ ազդեցիկ քարոզչական ուղղություն է նաև թերթում ձևավորել և թերթով տարել Մուշտակ Սըթքըն:

Ի սկզբանե թերթը ոգեշնչված չէր թրքական ազգային նկրտումներով, սակայն այն երբ Էրզրումի քաղաքապետարանի խորհրդի անդամ, ծնունդով Քղիից Սուլեյման Նեջաթի Բեյը (Özçelik, 2005, 13) դարձավ համանուն դպրոցի տնօրենը, խնդրո առարկա թերթն ակտիվ դիրքեր զբաղեցրեց (Özçelik, 2005, 10): Հենց նա էր, որ որոշեց վերահրատարակել իթթիհատական այս թերթը՝ հիմք դնելով նաև համանուն դպրոցին, որի նպատակն էր նաև թերթով առաջադրված քաղաքական հայացքները կրթական համակարգ ներմուծելու:

---

[1] Թուրք.՝ «*Vilâyât-ı Şarkiyye Ermenistan olamaz*»:

[2] Այս թեզն առաջ է քաշվում՝ ժխտելու Մուդրոսի զինադադարով հաստատված պայմանները:

[3] Ժմկ. թուրք.՝ Ulusal Egemenlik/ Ազգային գերիշխանություն. Սեբաստիայում լույս տեսնող թերթ է, որն առաջատարներից էր տարածաշրջանում, 1919 թ. Ազգային շարժման առաջին հրատարակություններից (Ural, 2002,165):

[4] Թերթի համբավն այնքան է ընդլայնվում, որ նույնիսկ անասնավաճառները Ստամբուլում՝ Կոստանդնուպոլսում, թերթի մեկ օրինակը վաճառել են մեկ ոսկու դիմաց (Baydar, M. Ç. "Albayrak Matbaa ve Gazetesi: 1913-1921", http://www.tyb.org.tr/yazarlarimiz/m-ce-tin-baydar/1052-albayrak-matbaa-ve-gazetes-1913- 1921.html, 01.02.2022):

Մինչ «Գենչ Քալեմլերը» («Genç Kalemler[1]»-ը) և Զիյա Գյոքալփը պաշտպանում էին թյուրքականությունը Սալոնիկում՝ Օսմանյան կայսրության արևմտյան սահմանին, այդ ընթացքում արևելյան սահմանի վրա գտնվող «Ալբայրաք» թերթը նույն նպատակին էր լծված» (Baydar, *Albayrak Matbaa ve gazetesi 1913-1921,* 01.02.2022):

Մինչ Սուլեյման Նեջաթին պատրաստում էր դպրոցի ուսումնական ծրագիրը, նրան հետաքրքրում էր նաև այս թերթի ազդեցության սահմանների ընդլայնումը իրենց նպատակային զեղծ ու ժխտողական պայքարում: Միաժամանակ նա հետևում էր Էրզրումի համագումարի աշխատանքներին: Մուստաֆա Քեմալն այս երիտասարդ լրագրողին հանձնարարել էր պատրաստել «*Misak-ı Millî*»-ի (*Ազգային ուխտ*) նախագծերը, որոնք հիմք կդառնային իր մտադրած նոր պետության առաջին սահմանադրության համար, և Սուլեյման Նեջաթին հաջողությամբ կատարեց իրեն հանձնարարված այդ գործը (Özçelik, 2021, 21-37):

Թերթի հրատարակչական աշխատանքներն իրականացնում էր իզմիրցի հիվանդ ու ծեր Արիֆ Բեյը: Երբ Սուլեյման Նեջաթին, որն ընտրվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր, ստիպված եղավ թողնել թերթի ղեկավարությունը, նրա տեղը զբաղեցրին Սըթքի և Ջևաթ Դուրսունօղլու եղբայրները (Akbulut, 1991, 8). Սըթքը՝ 24 տարեկան էր, երիտասարդ, որը կարողացավ այդ տարիքում կարևոր անձ դառնալ այդ գործընթացում: Վերջինս չորս տարի գերության մեջ ապրել էր կովկասյան և սիրիական ճակատներում, 1919 թ. եկել էր Էրզրում և Սուլեյման Նեջաթիից ստանձնել «Ալբայրաք» թերթի պատասխանատվությունը եղբոր՝ Ջևաթ Բեյի հետ (Özçelik, 2021, 24):

1920 թ. վերջերին Սուլեյման Նեջաթին Անկարա է տեղափոխվում որպես պատգամավոր, իսկ Ջևաթ Դուրսունօղլուն Կարսի կրթական տեսչությունն էր կառավարում, իսկ Մուշտակ Սըթքը՝ ու Սուլեյման Նեջաթիի եղբայր Միթհաթ Բեյը՝ մնում էին թերթի խմբագրությունում, սակայն այդ շրջանում, ինչպես նշվում է թրքական աղբյուրներում, «Միթհաթի՝ մտքերն ու ձգտումները չգիտես ինչու չէին բացում Էրզրումի սահմանները և անընդհատ անցնում էին դեպի ռեգիոնալիզմ (Özçelik, 2005, 14): Փաստորեն, նա նույնիսկ չի հրապարակում Անկարայից ուղարկած Սուլեյման Նեջաթիի հոդվածները, ուստի «Ալբայրաք» թերթի հրատարակչական քաղաքականությունը զգալիորեն փոխվում է»: Այս փուլում Ալբայրաք դպրոցն ու թերթը անջատված էին միմյանցից, իսկ թերթի տնօրենությամբ ամբողջությամբ զբաղվում էր Միթհաթ Բեյը: Թուրք հետազոտողներն այն գնահատականն են տալիս թերթի այս շրջանի ուղղությանը, որ այդպես՝ «Ալբայրաքի» համար անհնարին դարձավ իր պարտականությունների կատարումը մինչև պայքարի ավարտը. «Կարծես «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսը, որը թերթը պաշտպանում էր տարիներ շարունակ, փոխարինվել էր «Էրզրումն էրզրումցիների համար» կարգախոսով» (Özçelik, 2021, 24): Սակայն մեր հետազոտությունը թույլ է տալիս նշելու, որ մինչև վերջին համարները՝ բովանդակային ուղղվածությունն ընդգծված էր հայերի նկատմամբ ատելության ամրապնդմամբ:

Թերթի խմբագրությունը նաև՝ մեղադրվում էր Արևելքում գտնվող բանակի սպաներին ռուսներին զենք վաճառելու մեջ: Այս զարգացումներից հետո՝ 1921 թ. մարտին,

[1] «Երիտասարդ գրիչներ»՝ պարբերական:

Քազըմ Կարաբեքիրը թաքցրեց Միթհաթին, և թերթը փակվեց: Դրանից հետո Քազըմ Կարաբեքիրը հասկացավ, որ Արևելքը մնացել է առանց թերթի, և զինվորական տնօրենության ներքո գտնվող տպարանում «Վարլըք» անունով թերթ հրատարակեց: Այս թերթը թեև ինչ-որ կերպ հանդես էր գալիս որպես Քազըմ Կարաբեքիրի խոսնակ, սակայն նրա տպագրական կյանքը նույնպես կարճ էր (Özçelik, 2005, 14):

«Ալբայրաքի» հակահայ և հայատյաց քարոզչությունը: Մուդրոսի զինադադարից հետո վերահրատարակված «Ալբայրաք» թերթն իր ընթերցողների առջև է հայտնվում «Արևելյան նահանգները Հայաստան չեն լինելու» կարգախոսով, որն այնքան է խորանում իր նշանակության և կիրառության ծավալների մեջ, որ դառնում է թրքական ժխտողական առաջին թեզերից: Այն կիրառում էր նշված կարգախոսը թերթի յուրաքանչյուր համարում որպես արդեն մշտական ձևաչափ՝ մեծ արձագանք ստանալով Արևմտյան Հայաստանի նահանգները հայերին որպես հայրենիք վերադարձնելու դեմ պայքարի գործում: Այս վերնագրով նա թե՛ լուրերով, թե՛ վերլուծական-քարոզչական սյունակներով հարցը օրակարգ բերեց և պարբերաբար տեղեկացրեց հանրությանն իրենց նպատակադիր խնդրի մասին, այն է՝ «մենք ընդդեմ հայերի Մեծ Հայաստան ստեղծելու երազանքի» (Özçelik, 2003, 18): Թերթի 121-րդ համարից այս կարգախոսը փոխվել է՝ «Արևելյան նահանգները թուրքի հայրենիքն են[1]»-ի՝ պայմանավորված Ալեքսանդրապոլի պայմանագրով (Aslan 2012, 7, տե՛ս նաև՝ Temiztürk, Seyhan, 2014):

Թերթի վերահրատարակումը, ինչպես արդեն ընդգծել ենք, գլխավորապես պայմանավորված էր Մուդրոսի զինադադարով. այն վերահրատարակվում էր որպես ի պատասխան Մուդրոսի զինադադարի և ի հակադրություն հայերին՝ հայերի հայրենի տարածքները հայերին վերադարձնելու գործընթացին: Թեզի առաջադրած նյութերը հիմնականում ներկայացվում էին մի քանի ուղղություններով՝ հայատյացության սերմանում, թրքական ազգային ոգին բարձրացնելու նպատակով թյուրքականության փառաբանում, սպանությունների, բռնությունների, բռնաբարությունների տեսարանների վերագրում հայերին, կեղծ վիճակագրություններ «կոտորված թուրքերի քանակի և բնակավայրերի», պատմական տեղեկությունների կեղծում, այն տերությունների քննադատում, որոնք սատար են կանգնում «ցեղասպան հայերին» (Albayrak, S. 53; McCarthy, 2002; Albayrak, S. 118, 15 Teşrin-i sani 336): Հայերն այս թերթում ներկայացվում են՝ «հայկական հարց, հայկական սարսափներ, հայկական դեպքեր, հայկական կոտորածներ» ձևաչափով՝ նորությունների, մեկնաբանությունների, բանաստեղծությունների, նամակների և հայտարարությունների տեսքով (Ö. Gündoğdu, “Ermenilerin Hakkımızda Reva Gördükleri Fecî Zulümler Tahkikatından Tehcirden Evvel”, Albayrak, S. 6, 22 Nisan 1919; Ö. Gündoğdu, “Ermenilerin Hakkımızda Reva Gördükleri Fecî Zulümler Tahkikatından Tehcirden Evvel 20”, Albayrak, S. 23, 28 Ağustos 1919; “Muhit Haberleri”, Albayrak, S. 6, 22 Nisan 1919; Albayrak, S. 6, 22 Nisan 1919; Albayrak, S. 29, 21 Eylül 1919; Albayrak, S. 43, 9 Teşrîn-i sâni 335. Albayrak, S. 34, 18 Kânûn-ı evvel 335; Albayrak, S. 20, 18 Ağustos 1919; Albayrak, S. 20, 18 Ağustos 1919;

[1]Թուրք.՝ «*Vilâyât-ı Şarkiyye Türkün Anavatandır*»:

Albayrak, S. 23, 28 Ağustos 1919; Albayrak, S. 34, 9 Teşrîn-i evvel 335; Albayrak, S. 38, 23 Teşrîn-i evvel 335; Albayrak, S. 34, 9 Teşrîn-i evvel 335. "Şarkî Anadolu Türk'ü ile Kürt'ü Tefrik Edilemez"; Albayrak, S. 40, 30 Teşrîn-i evvel 335; Albayrak, S. 29, 21 Eylül 1919):

«Ալբայրաքն» իր արձագանքն էր ցուցաբերում Արևելքում հայկական քաղաքականության և հայերին աջակցող պետությունների վերաբերյալ: Ամենաազդեցիկ թղթակիցներից Սըթքը Դուրսունօղլուն ներկայացնում էր հայերի և նրանց աջակցող եվրոպական պետությունների մոտեցումները որպես ոճրագործություններ (*Durak*, 2011, 2-22): Վերջինս հմտորեն կարողանում էր մամուլն օգտագործել իրենց այս նպատակի համար. Սըթքի Դուրսունօղլուն[1] մեծ աջակցություն է ցուցաբերել Մուստաֆա Քեմալի նախաձեռնած ազատագրական պայքարին «Ալբայրաք» թերթում տպագրվող իր հոդվածներով, և, ինչպես նշվում է թրքական աղբյուրներում, նա «թարգմանել-փոխանցել է թուրքերի ազգային հույզերը-զգացումները» (*Durak*, 2011, 5-9), որոնք, սակայն, ցանկացած օբյեկտիվ ընթերցող չի կարող չնկատել, լեցուն էին հայատյաց նպատակադիր քարոզչական դրսևորումներով:

Նմանատիպ հոդվածներից է «Ալբայրաք» թերթի 1919 թ. ապրիլի 22-ի համարում լույս տեսած նյութը՝ վերնագրված «Հայկական վայրագություններից»: Ըստ այս լուրերի՝ մահմեդական «Ալվաբի» կոչվող գյուղում ողբ է հնչել հայերի՝ մուսուլմանների նկատմամբ իրականացրած վայրագությունների մասին, և այդ ողբը բանաստեղծական օրինակով հիշատակվում է այդ հոդվածում (Albayrak, 22 Nisan 1919, S 6).

«Ինչո՞ւ է այս որբ գյուղն այսքան լացում.
Ինչո՞ւ է այսպիսի կարմիր արյուն հոսում ամեն գետից:
Ի՞նքն էլ է տուժել. վզին շղթա է փաթաթվել:
Բավակա՞ն է, ի սե՞ր Աստծո:
Ինչո՞ւ է յուրաքանչյուր ծխական համայնք դարձել այդքան ամայի, աղոտ խավար:
….
Ափսո՞ս, ձեր աչքերը չե՞ն տեսել այս ամենը:
Հերի՞ք է, ի սե՞ր Աստծո, հերի՞ք է…» (Albayrak, 22 Nisan 1919, S 6) :

Թերթը շարունակական բնույթով տպագրում է կեղծ նյութեր, այսպես կոչված, հայկական վայրագությունների մասին, որով նշում է, որ այն հողը, որի վրա թափվել է թուրքի արյուն, չի կարող դառնալ հայերի հայրենիք: Միտումնավոր տպագրվում է զեղծարար ժխտողական նյութերի շարք՝ որպես հայ ազգի դիմագծային թիրախավորում աշխարհի առաջ:

«Ալբայրաք» թերթը փաստերի նպատակային խեղաթյուրմամբ ուշադրությամբ հետևել է հայերին Նախիջևանում, Արցախում և ընդհանրապես Կովկասի տարածաշրջանում, կեղծ նորություններ է հաղորդել այդ տարածքների մասին՝ իր ընթերցողներին փորձելով տրամադրել հորինված իրադարձությունների ու զարգացումների մասին տեղեկություններով: Այդպիսի լուրերն ամփոփվում էին «Կովկասյան լուրեր» խորագրի ներքո: Նախիջևանի մասին նյութերից մեկում ասվում է

[1] «Սըթքի Դուրսունօղլուն Միթհաթ Բեյի արատավոր պահվածքի և տհաճ անձնավորություն լինելու պատճառով թողել է «Ալբայրաք» թերթը՝ ստանձնելով նույն շենքում գործող համանուն «Ալբայրաք» հիմնական դպրոցում ուսուցչի պաշտոն. նա երեսուներեք տարի ծառայում է իր երկրին որպես ուսուցիչ»,– այսպես է նշվում թրքական աղբյուրներում (Akbulut, 2006, 8; *Durak*, 2011, 15):

հետևյալը. «Այժմ պարզ է, որ հայերը իսլամի դեմ բնաջնջման քաղաքականություն են վարում: Ե՞րբ է վերջանալու այս մարդասպան ջարդը, այս պատվի ու պատվի բռնաբարությունը Հայաստանի Հանրապետության կողմից»: Ապա շարունակվում է. «…Հայտնի է, որ հայերն այս օրերին Կովկասում մեր համակրոնականների նկատմամբ շատ ստոր և դաժան են վարվում և բռնաբարել են նրանց՝ թրքական տարրին ամբողջությամբ ոչնչացնելու մտադրությամբ: Ավելի վաղ հայտնել էինք, որ այս մարդասպան ու մարդասպան ավազակները մեծացնում են իրենց ճնշումը Նախիջևանի շրջանում» (Albayrak, 11 Ağustos 1919, S 19):

Փաստերը կեղծելու այս մտայնության որդեգրման գործում, արդեն նշել ենք, Մուշտակ Սըթքըն ամենահակահայ թղթակիցներից էր:

«Ալբայրաք» թերթում Մուշտակ Սըթքըն շեշտում է, որ անհրաժեշտ է «կանխել հայկական քարոզչության սխալ ուղղորդումները, հատկապես այն անհիմն պնդումների դեմն առնել, թե թուրքերը կոտորել են հայերին»: Խստորեն քննադատելով հայկական կողմին՝ Մուշտակ Սըթքըն նաև ցանկանում էր, որ մարդկությունը չխոնարհվի հայերի առաջ և նաև ընդդիմանա «Եվրոպայի կույր ու նողկալի քաղաքականությանը», որն ասում է, որ «խեղդվողը սպանողն է, իսկ խեղդողը՝ անմեղ», մինչդեռ իսլամ-թուրքերը՝ ամենազազրելի ռասան: Աշխարհը խեղդվում է այսպիսի արյունոտ ձեռքերով» (Albayrak, 12 Kasım 1919, s.1):

Նույն կեղծ և ժխտողական քարոզչության համատեքստում թերթի 1919 թ. օգոստոսի 18-ի համարում «Արևելյան նահանգները Հայաստան չեն լինելու» կարգախոսի ներքո ներկայացված հոդվածը (Albayrak, 18 Ağustos, S 20) միակը չէր, որ տպագրում էր տարբեր լուրեր, թե իբր հայերը սարսափելի վայրագություններ են իրագործում թուրքերի նկատմամբ: Այս և նմանօրինակ լուրերի շարքը գրեթե նույնատիպ վերնագրերով կրկնվում էր յուրաքանչյուր համարում (Uca, 2010, 259-282):

Թերթն իր հայտարարությունները շարունակեց տարատեսակ զրպարտող տեղեկություններով, թե իբր «հայերը (Özçelik, 2021, 30; Albayrak, 18 Ağustos, S 20) մահապատժի են ենթարկել հինգ տարեկան իսլամադավան աղջիկների, և նույնիսկ այս աղետից տուժած տղաներին դրեցին սվինների ծայրերին ու սպանեցին» (Özçelik, 2021, 30; Albayrak, 18 Ağustos, S 20):

«Հայկական վայրագությունների ևս մեկ օրինակ ամերիկացիների ուշադրությանը» վերնագրով մեկ այլ հոդվածում թերթը ներառել է մի լուր, որը «Ղարաբաղի փախստական մահմեդականների մասին է, որոնք խղճուկ ձևով ապաստան են խնդրել ճանապարհներին՝ վախենալով Հայաստանում իսլամի դեմ կատարված վայրագություններից ու աղետներից» (Albayrak, 16 Eylül 1919, S 35; նույնի՝ 11 Eylül 1919. S 37):

Եզրափակելով 1919 և 1920 թթ. «Ալբայրաք» թերթի վերոնշյալ նյութերի անդրադարձը՝ նշենք, որ քննվող կարգախոսի ներքո թերթը սերմանում էր և ձևավորում զանգվածային հասարակական ատելություն, որով իբր մարդկությանը կոչ էր անում կանխել իրենց հայրենիքի մաս կազմած տարածքների վերադարձը հայերին: Այս ուղղությամբ տպագրվել

են բազմաթիվ զեղծարարար ու ժխտողական նյութեր, որոնք բողոքի տրամարդության նպատակով ուղղորդել են հասարակությանը՝ բռնի քայլեր ձեռնարկելու:

Մենք կենտրոնացել ենք ընդամենը մի քանի հոդվածի վրա, սակայն նմանատիպ բազմաթիվ հոդվածներ տեղ են գտել թերթի տարբեր համարներում:

Ինչպես հայտնի է, «Կոնգրեսի շրջանը», որը թրքական պետական կառավարման առումով անցումային ու պայքարի փուլ էր, մի շրջան էր, որում շարունակվում էին կազմակերպչական ջանքերը «օկուպացիաների դեմ՝ Մուդրոսի զինադադարից սկսած և Էրզրումի, Սեբաստիայի համագումարներով շարունակելի»: Այս առումով ժխտողական թեզի զարգացումը և այդ ուղղությամբ կազմակերպչական աշխատանքի սկիզբը դրվում են այն ժամանակ, երբ Կոստանդնուպոլսի կառավարությունը չէր կարող արդյունավետորեն միջամտել, և Կոստանդնուպոլսի թերթերը նույնպես ենթարկվում էին գրաքննության, հետևապես թրքական զեղծարար պայքարն ընդգծված դրսևորումներով տեսանելի էր մի քանի առաջատար թրքական թերթում, որոնցից գլխավորներից էր «Ալբայրաքը»: Այս համատեքստում «Ալբայրաք» թերթը, որդեգրելով քաղաքական նպատակային ուղղվածություն, բոլոր հնարավոր ուղիներով առաջ է քաշում քննվող թեզը. օգտագործելով բոլոր հնարավոր լծակները՝ այն փորձել է հանրությանը համախմբել «ազգային գիտակցության ու գաղափարների շուրջ» իր հրապարակած սադրիչ լուրերով, հայատյաց թղթակիցների զբաղեցրած սյունակներով և իր վարած ժխտողական և հակահայ քաղաքականությամբ: Թրքական աղբյուրներում այս թերթը հիշատակվում է որպես Էրզրումի համագումարի աշխատանքներին ուշադրությամբ հետևած և պատշաճ կերպով ազգային պայքարում իր ներդրումն ու պարտքը կատարած թերթ:

Սակայն պետք է նշենք, որ մեր ուսումնասիրած նյութերը թույլ են տալիս փաստել, որ թրքական ժխտողական քաղաքականության համատեքստում և հանրային իրազեկման մակարդակում «Ալբայրաքը» դրսևորել է անկանգ հակահայ մոտեցում և առաջ քաշած իր այս թեզով կարողացել է սկիզբ դնել մի շարժման, որը առաջ է բերել թե՛ ժխտողական քարոզիչների՝ թղթակցության եղանակով, որոնք ձևավորել են ընդգծված հայատյաց զանգվածային մտածողություն՝ որպես թրքական ազգային պայքարին տանող ամենարդյունավետ ճանապարհներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Başbakanlık Osmanlı Arşivi (BOA), Dosya No: 2877, Gömlek No: 11.
2. BOA, Dosya No: 2877, Gömlek No: 37.
3. Başbakanlık Cumhuriyet Arşivi (BCA), Dosya No: 277–258.
4. **Akbulut D. A. (2006),** Albayrak Olayı, Istanbul, Temel Yayınları, 2006, 221 sayfa.
5. **Çoşar Ö. S. (1964),** Milli Mücadele Basını, İstanbul, As Matbaası, 302 sayfa.
6. **Durak M. (2011),** "Millî Mücadelenin Önemli Simalarından Erzurumlu Müştak Sıtkı (Dursunoğlu) Bey, Yüksek Lisans Tezi, Tez Yöneticisi Yavuz Aslan, Erzurum, Atatürk Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü, Tarih Anabilim Dalı, 155 sayfa.
7. **Akbulut D. A., Aslan Y., Aslan B., Tolga B., Erdem Ö., Uca A., Öncü A. S., Yüksel M. (2009),** Yüce Yurttan Yükselen Ses Albayrak 1919-1921, Erzurum, Atatürk Üniversitesi, 471 sayfa.

8. **Aslan Y. (2012),** Yüce Yurttan Yükselen Ses Albayrak 1919–1921, Erzurum, Atatürk Üniversitesi, 471.
9. **Dursunoğlu G. (1946),** Milli Mücadelede Erzurum, Ankara, 171 sayfa.
10. **Güneri N.S., (Haz. Ali Birinci) (1999),** Hâtıra Defteri - Erzurum'da Kongre Günleri, Erzurum Kitaplığı, İstanbul, 118 sayfa.
11. **Temiztürk H., Seyhan S. (2014),** Albayrak Gazetesinde Ermeni Olayları, Yeni Türkiye Degisi, Yeni Türkiye Stratejik Araştırma Merkezi, s. 2349-2365.
12. **McCarthy J. (2002),** Atatürk Üniversitesi 2002-2003 öğretim yılı açılış dersi (basılmamış konuşma metni), Erzurum.
13. **Özçelik I. (2003),** Millî Mücadelede Güney Cephesi Urfa, Ankara, Atatürk Araştırma Merkezi, 336 sayfa.
14. **Özçelik I. (2005),** Millî Mücadelede Anadolu Basınında Güney Cephesi, Ankara, Atatürk Araştırma Merkezi, 312 sayfa.
15. **Özçelik I. (2021),** Kongreler Döneminde Albayrak Gazetesine Yansıyan Ermeni Eylemlerinden Örnekler (1919-1920), Ankara, Mustafa Kemal Paşa'nın Anadolu'ya Geçişi ve Kongreler Uluslararası Sempozyumu, (Yayına Hazırlayan Murat SAYGIN), Atatürk Araştırma Merkezi Yayınları, s. 21-37.
16. **Selçuk U. (2002),** "Ali Galip Olayı'nın Milli Mücadele Taraftarı Gazetelerdeki (İrade-i Milliye ve Albayrak) Yankıları", Ankara Üniversitesi TİTE-AYD, No. 29-30, Ankara, s. 159-174.
17. **Şen I. (1992),** "Vilayat-ı Şarkiyye Müdafaa-ı Hukuk-ı Milliyye Cemiyeti ve Faaliyetleri", Yakın Tarihimizde Kars ve Doğu Anadolu Sempozyumu, Ankara, s.70.
18. **Şirin F. Ş. (2009),** Etkili birer propaganda aracı olarak Ermeni sorunu Karşısında Albayrak ve Hadisat gazeteleri (1918–1919), Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi Tarih Bölümü Tarih Araştırmaları Dergisi 28(45), Ankara, s. 207-219.
19. **Tolga B. (2010),** Millî Mücadele Günlerinde Cevat Dursunoğlu, Ankara, Atatürk Araştırma Merkezi, 228 sayfa.
20. **Uca A. (2010),** Erzurum'da Millî Mücadele Dönemînde Yayinlanan Albayrak Gazetesî'ndekî Ilânlar, Erzurum, Türkiyat Araştırmaları Enstitüsü Dergisi [TAED], 42, A. Ü. Türkiyat Araştırmaları Enstitüsü, s. 259-282.

Պարբերական մամուլ
21. "Muhit Haberleri", Albayrak, S. 6, 22 Nisan 1919.
22. Albayrak 1919-1920.
23. Ö. Gündoğdu, "Ermenilerin Hakkımızda Reva Gördükleri Fecî Zulümler Tahkikatından Tehcirden Evvel", Albayrak, S. 6, 22 Nisan 1919.
24. Ö. Gündoğdu, "Ermenilerin Hakkımızda Reva Gördükleri Fecî Zulümler Tahkikatından Tehcirden Evvel 20", Albayrak, S. 23, 28 Ağustos 1919.
25. Albayrak Gazetesi, https://www.turkcebilgi.com/albayrak_gazetesi?fbclid=IwAR1ZmCDH3jmUASG0wZNCax4ldm1oi0WHpDN2X8o-CXDqllJPq1PP8jkNCPo#post.
26. Cevat Dursunoğlu (1892-1970)/ https://ataturkansiklopedisi.gov.tr/bilgi/cevat-dursunoglu-1892-1970.

27. Baydar M. Ç. "Albayrak Matbaa ve Gazetesi: 1913-1921"/ http://www.tyb.org.tr/yazarlarimiz/m-cetin-baydar/1052-albayrak-matbaa-ve-gazetes-1913- 1921.html,
28. Vilâyât-ı Şarkiyye Müdâfaa-i Hukûk-ı Milliye Cemiyeti/https://ataturkansiklopedisi.gov.tr/bilgi/vilayat-i-sarkiyye-mudafaa-i-hukuk-i-milliye-cemiyeti/?pdf=3922, 02.02.2022.
29. *İlk sesi haykıran yüce Erzurum*, / https://www.erzurumsoz.com/ilk-sesi-haykiran-yuce-erzurum/2274/, 02.02.2022.

REFERENCES

1. Başbakanlık Osmanlı Arşivi (BOA), Dosya No: 2877, Gömlek No: 11.
2. BOA, Dosya No: 2877, Gömlek No: 37.
3. Başbakanlık Cumhuriyet Arşivi (BCA), Dosya No: 277–258.
4. **Akbulut D. A. (2006),** Albayrak Olayı, Istanbul, Temel Yayınları, 2006, 221 sayfa.
5. **Çoşar Ö. S. (1964),** Milli Mücadele Basını, İstanbul, As Matbaası, 302 sayfa.
6. **Durak M. (2011),** "Millî Mücadelenin Önemli Simalarından Erzurumlu Müştak Sıtkı (Dursunoğlu) Bey, Yüksek Lisans Tezi, Tez Yöneticisi Yavuz Aslan, Erzurum, Atatürk Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü, Tarih Anabilim Dalı, 155 sayfa.
7. **Akbulut D. A., Aslan Y., Aslan B., Tolga B., Erdem Ö., Uca A., Öncü A. S., Yüksel M. (2009),** Yüce Yurttan Yükselen Ses Albayrak 1919-1921, Erzurum, Atatürk Üniversitesi, 471 sayfa.
8. **Aslan Y. (2012),** Yüce Yurttan Yükselen Ses Albayrak 1919–1921, Erzurum, Atatürk Üniversitesi, 471.
9. **Dursunoğlu G. (1946),** Milli Mücadelede Erzurum, Ankara, 171 sayfa.
10. **Güneri N.S., (Haz. Ali Birinci) (1999),** Hâtıra Defteri - Erzurum'da Kongre Günleri, Erzurum Kitaplığı, İstanbul, 118 sayfa.
11. **Temiztürk H., Seyhan S. (2014),** Albayrak Gazetesinde Ermeni Olayları, Yeni Türkiye Degisi, Yeni Türkiye Stratejik Araştırma Merkezi, s. 2349-2365.
12. **McCarthy J. (2002),** Atatürk Üniversitesi 2002-2003 öğretim yılı açılış dersi (basılmamış konuşma metni), Erzurum.
13. **Özçelik I. (2003),** Millî Mücadelede Güney Cephesi Urfa, Ankara, Atatürk Araştırma Merkezi, 336 sayfa.
14. **Özçelik I. (2005),** Millî Mücadelede Anadolu Basınında Güney Cephesi, Ankara, Atatürk Araştırma Merkezi, 312 sayfa.
15. **Özçelik I. (2021),** Kongreler Döneminde Albayrak Gazetesine Yansıyan Ermeni Eylemlerinden Örnekler (1919-1920), Ankara, Mustafa Kemal Paşa'nın Anadolu'ya Geçişi ve Kongreler Uluslararası Sempozyumu, (Yayına Hazırlayan Murat SAYGIN), Atatürk Araştırma Merkezi Yayınları, s. 21-37.
16. **Selçuk U. (2002),** "Ali Galip Olayı'nın Milli Mücadele Taraftarı Gazetelerdeki (İrade-i Milliye ve Albayrak) Yankıları", Ankara Üniversitesi TİTE-AYD, No. 29-30, Ankara, s. 159-174.
17. **Şen I. (1992),** "Vilayat-ı Şarkiyye Müdafaa-ı Hukuk-ı Milliyye Cemiyeti ve Faaliyetleri", Yakın Tarihimizde Kars ve Doğu Anadolu Sempozyumu, Ankara, s.70.
18. **Şirin F. Ş. (2009),** Etkili birer propaganda aracı olarak Ermeni sorunu Karşısında Albayrak ve Hadisat gazeteleri (1918–1919), Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi Tarih Bölümü Tarih Araştırmaları Dergisi 28(45), Ankara, s. 207-219.

19. **Tolga B. (2010),** Millî Mücadele Günlerinde Cevat Dursunoğlu, Ankara, Atatürk Araştırma Merkezi, 228 sayfa.
20. **Uca A. (2010),** Erzurum'da Millî Mücadele Dönemînde Yayinlanan Albayrak Gazetesî'ndekî Ilânlar, Erzurum, Türkiyat Araştırmaları Enstitüsü Dergisi [TAED], 42, A. Ü. Türkiyat Araştırmaları Enstitüsü, s. 259-282.
21. "Muhit Haberleri", Albayrak, S. 6, 22 Nisan 1919.
22. Albayrak 1919-1920.
23. Ö. Gündoğdu, "Ermenilerin Hakkımızda Reva Gördükleri Fecî Zulümler Tahkikatından Tehcirden Evvel", Albayrak, S. 6, 22 Nisan 1919.
24. Ö. Gündoğdu, "Ermenilerin Hakkımızda Reva Gördükleri Fecî Zulümler Tahkikatından Tehcirden Evvel 20", Albayrak, S. 23, 28 Ağustos 1919.
25. Albayrak Gazetesi, https://www.turkcebilgi.com/albayrak_gazetesi?fbclid=IwAR1ZmCDH3jmUASG0wZNCax4ldm1oi0WHpDN2X8o-CXDqllJPq1PP8jkNCPo#post.
26. Cevat Dursunoğlu (1892-1970)/ https://ataturkansiklopedisi.gov.tr/bilgi/cevat-dursunoglu-1892-1970.
27. Baydar M. Ç. "Albayrak Matbaa ve Gazetesi: 1913-1921"/ http://www.tyb.org.tr/yazarlarimiz/m-ce-tin-baydar/1052-albayrak-matbaa-ve-gazetes-1913- 1921.html,
28. Vilâyât-ı Şarkiyye Müdâfaa-i Hukûk-ı Milliye Cemiyeti/https://ataturkansiklopedisi.gov.tr/bilgi/vilayat-i-sarkiyye-mudafaa-i-hukuk-i-milliye-cemiyeti/?pdf=3922, 02.02.2022.
29. *İlk sesi haykıran yüce Erzurum*, / https://www.erzurumsoz.com/ilk-sesi-haykiran-yuce-erzurum/2274/, 02.02.2022.

Ներկայացվել է՝ 05.05.2022 Received 05.05.2022 Получено: 05.05.2022
Գրախոսվել է՝ 01.07.2022 Reviewed 01.07.2022 Рассмотрено: 01.07.2022
Ընդունվել է՝ 25.08.2022 Accepted 25.08.2022 Принято: 25.08.2022

E-mail: elina-mirzoyan@mail.ru